



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 12 » հունվարի 2017թ. N 9-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N256-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով
Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-
ի N1237-Ն որոշման N1 հավելվածի 12-րդ կետի <<դ>> ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2014
թվականի սեպտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու և
հասարակական խորհրդի կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին»
N256-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) հրամանի 2-րդ կետով հաստատված

ա. 1-ին հավելվածում «Ա. Հակոբջանյան «Հայաստանի
համայնքների միություն» բառերը փոխարինել «Լ.Զավարյան
<<Հայաստանի համայնքների միություն» բառերով.

բ. 1-ին հավելվածը լրացնել

«Ա.Հակոբջանյան

«Էկո-Սիս» հասարակական կազմակերպության
ներկայացուցիչ,

Ս.Այվազյան

Երևանի բնապահպանական տեղեկատվության
հասարակական Օրիուս կենտրոնի
համակարգող» բառերով:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

<<12>> հունվարի 2017թ.
ք.Երևան